

1570

2(075)

U-15

806



2(075)

U-15

Բ. Տ Ա Ր Ի

15 NOV 20

# ԴԱՍԱՏԵՏՐ ԿՐՈՆԻ

«Եւ ուսուցիչք որդւոց ձերոց  
խօսել զտոսա ի նստել ի տան.  
և ի գնալ ի ճանապարհի և  
ի ննջել և ի յառնելո»:  
Վ. Մովս. ժառ. 10.

ՀԱՄԱՁԱՅՆ ԾԲԱԳՐԻ ՀՈԳԵՒՈՐ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ

ԺԲ. ՏՊ.

Կ ա ղ մ ց

ՍԱՀԱԿ Ա. ԳՀ. ՍԱՀԱԿԵԱՆՑ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՍՊԱՐԱՐԻ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ, ՊՈԼԻՑ. 7.

1907

(92)

2(075)

U-15

1570

3 2 JUL 2013

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

**Տ. Տ. ՄԿՐՏՉԻ Ա.**

Արքազնագոյն Կաթողիկոսի Ամենայն Հայոց, ծայրագոյն Պատրիարքի Համազգական Եպիսկոպոսարար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Աթոռոյ Արքայ Կաթողիկէ Էջմիածնի:

25 JUL 2013

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՆՈՒՄԻ ԿԵՆՏՐՈՆ

Մ Կ Ը Զ Դ Մ Ս Զ Զ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՆՈՒՄԻ ԿԵՆՏՐՈՆ  
ԳՆԱՀԱՆՈՒՄԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՎԵՐՈՒՄԻ ԿԵՆՏՐՈՆ  
ԳՆԱՀԱՆՈՒՄԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՎԵՐՈՒՄԻ ԿԵՆՏՐՈՆ  
ԳՆԱՀԱՆՈՒՄԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՎԵՐՈՒՄԻ ԿԵՆՏՐՈՆ

ՀԵՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՎԵՐՈՒՄԻ ԿԵՆՏՐՈՆ  
ԳՆԱՀԱՆՈՒՄԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՎԵՐՈՒՄԻ ԿԵՆՏՐՈՆ  
ՀՄՍՈՒՄԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՎԵՐՈՒՄԻ ԿԵՆՏՐՈՆ  
ՀՄՍՈՒՄԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՎԵՐՈՒՄԻ ԿԵՆՏՐՈՆ

62144.67

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՆՈՒՄԻ ԿԵՆՏՐՈՆ  
ԳՆԱՀԱՆՈՒՄԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՎԵՐՈՒՄԻ ԿԵՆՏՐՈՆ  
ԳՆԱՀԱՆՈՒՄԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՎԵՐՈՒՄԻ ԿԵՆՏՐՈՆ  
ԳՆԱՀԱՆՈՒՄԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՎԵՐՈՒՄԻ ԿԵՆՏՐՈՆ

1.

### ՂԱԶԱՐ ՈՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

Ղազարոս անունով մի հիւանդ մարդ կար Բեթանիա գիւղում: Նրա երկու ըոյրերը՝ Մարիամը և Մարթան՝ մարդ ուղարկեցին Գալիլիա Յիսուսի մօտ, ասելու, որ իւր սիրելի Ղազարոսը հէւանդ է: Յիսուս, երբ այս բանը լսեց, ասաց. «Այն հիւանդութիւնը մեռնելու համար չէ»: Բայց մինչև մարդիկը լուր կբերէին, Ղազարոսը մեռաւ:

Յիսուս երբ լսեց, թէ Ղազարոսը հիւանդ է, ասաց իւր աշակերտներին. «Եկէք գնանք Հրէաստան, մեր բարեկամ Ղազարոսը հիւանդ է»: Յիսուս երբ եկաւ Բեթանիա, արդէն չորս օր էր՝ որ թաղել էին խեղճին: Ազգականներից շատերը եկել էին Մարիամի և Մարթայի մօտ՝ նրանց մխիթարելու: Երբ Մարթան լսեց, թէ Յիսուս գալիս է, գնաց նրա առաջ, իսկ Մարիամը տանը մնաց: Մարթան, երբ տեսաւ Յիսուսին, ասաց. «Տէր, եթէ այստեղ լինէիր, իմ

եղբայրը չէր մեռնի, բայց ես հաւատացած եմ՝ հիմա էլ, եթէ Աստծուն խնդրես, որ իմ եղբորը կեանք տայ, քո խօսքերը կլսի: Յիսուսն ասաց նրան. «Քո եղբայրը յարութիւն կառնի»: Մարթան ասաց. «Գիտեմ որ յառութիւն կառնի վերջին դատաստանի ժամանակ», երբ բոլոր մարդիկն էլ յարութիւն կառնեն, բայց ես հիմա եմ ուզում»: Յիսուս կրկնեց. «Ես եմ յարութիւնն ու կեանքը, ով ինձ հաւատայ, եթէ մեռնի էլ, դարձեալ կապրի, դու հաւատումս ես այս բանին»: Մարթան պատասխանեց, «Այո, Տէր, ես վաղուց հաւատացել եմ, որ դու ես Քրիստոսը՝ Աստծու որդին»:

Մարթան այս ասելուց ետ՝ գնաց թագուն կանչեց Մարիամին և ասաց. «Վարդապետը եկել է, կանչում է քեզ»: Մարիամը, երբ այս խօսքերը լսեց, շուտով վերկացաւ և գնաց: Այն հրէաները, որոնք տանն էին և սգւորներին մխիթարում էին, երբ տեսան, որ Մարիամը վեր կացաւ և գնաց, իրանք էլ նրա ետևից գնացին՝ կարծելով թէ գնում է գերեզմանի վրայ լաց լինելու:

Մարիամը, երբ տեսաւ Յիսուսին, ոտներն ընկաւ և ասաց. «Տէր, եթէ այստեղ լինէիր, իմ եղբայրը չէր մեռնի»: Երբ Յիսուս Մարիամին և նրա հետեկող հիւրերին

տեսաւ, որ լալիս էին, սիրտը լցուեց և ասաց. «Ո՞րտեղ էք թաղել ննջեցեալին»: Նրանք պատասխանեցին. «Տէր, արի և տես»: Յիսուս գերեզմանը որ տեսաւ, արտասուեց: Հրէաներն ասում էին. «Տեսնում էք ինչպէս է սիրում նրան»: Մի քանիսն էլ ասում էին. «Մի՞թէ սա չէր կարող այնպէս անել, որ Ղազարոսը չմեռնէր»:

Յիսուս մօտեցաւ գերեզմանին և ասաց. «Վեր առէք բերանի քարը»: Մարթան ասաց. «Տէր, արդէն հոտած կլինի, որովհետև չորս օրուան թաղած է»: Յիսուս ասաց. «Մարթա, չասացի՞ քեզ, որ եթէ հաւատաս, քո եղբայրը յարութիւն կառնէ»:

Քարը վեր առան: Յիսուս աչքերը երկինք բարձրացրեց, աղօթեց և ասաց. «Տայր, շնորհակալ եմ քեզից, դու ինձ միշտ լսել ես. խնդրում եմ այս ազամ էլ լսես և Ղազարոսին յարութիւն տաս, որ այս փոքովուրդը հաւատայ, թէ դու ես ուղարկել ինձ»: Այս ասաց և բարձր ձայնով աղաղակեց. «Ղազարէ, վեր կաց, դուրս եկ»: Մեռեալն իսկոյն դուրս եկաւ՝ ձեռներն ու ոտները պատանած, իսկ երեսը վարչամակով ծածկած: Յիսուս ասաց. «Արձակեցէք կապերը և թողէք, որ գնայ»: Ղազարոսն իսկոյն վերկացաւ և միւս մարդոց նման ման

էր գալիս: Մարիամի հետ եկած հրէաներից շատերը տեսան Յիսուսի արածը և հաւատացին նրան:

Ղազարոսի լարուծեան շարականը

Կենդանութեանց բաշխող Քրիստոս  
Ի Բեթանիա եկաւորեալ այսօր,  
Բարեկամին Ղազարոս:  
Պարգեւէ զկենդանութիւն:

Ամենքին կեանք բաշխող Քրիստոսն այսօր  
Բեթանիա եկաւ և իւր բարեկամ Ղազարոսին  
յարութիւն տուաւ:

2.

Տ Ա Ս Ն Կ Ո Յ Ս Ե Ր

Հին ժամանակ հրէաների մէջ այսպիսի սովորութիւն կար, որ հարսանիքին փեսան մեզ նման չէր գալիս հարսի մօտ և նրան իրենց տուն տանում, այլ՝ հարսի ընկերուհիներէից մի քանի կոյս աղջիկ՝ կէս գիշերին դուրս էին գալիս փեսայի առաջ՝ հարսի հետ: Աղջիկները ձեռներին ձողեր էին ունենում՝ ծայրից լապտեր կախած: Բացի դրանից հեռներն ամանով աւելորդ ձէթ էին վերցնում, որ եթէ փեսան ուշանալու

լինի, լապտերի մէջ ածեն: Փեսան էլ իւր տանից էր դուրս գալիս և ընկերների հետ միասին գալիս հարսի առաջ: Երկու խմբերը պատահում էին իրար փողոցի մէջ:

Մի անգամ մի հարսանիք կար: Տասը կոյս աղջիկ իրանց լապտերները վեր առան և գնացին փեսայի առաջ: Նրանցից հինգը չիմար, այսինքն անզգոյշ էին, իսկ հինգը իմաստուն, այսինքն զգոյշ էին: Յիմարները մոռացան իրանց լապտերների հետ աւելորդ ձէթ վերցնել, իսկ իմաստունները վերցրին: Փեսան ուշացաւ և ամենի քունը տարաւ:

Կէս գիշերին ձախ լսուեց թէ փեսան գալիս է: Կոյսերը վերկացան և լապտերները պատրաստեցին: Յիմարների լապտերների մէջ ձէթ չկար, քիչ էր մնում հանգչի, այս պատճառով խնդրեցին իմաստուններին. «Ձեր ձէթիցը մեզ էլ տուէք, որովհետև մեր լապտերները հանգչում են»: Իմաստունները պատասխանեցին. «Եթէ ձեզ ձէթ տանք, գուցէ մեզ էլ բաւական չլինի, աւելի լաւ է ծախողների մօտ գնացէք և ձեզ համար ձէթ գնեցէք»:

Երբ նրանք ձէթ առնելու գնացին, փեսան եկաւ. պատրաստ կոյսերը նրա հետ մտան հարսանքատունը և դուռը փակուեց:

Ետոյ միւս կոյսերն էլ եկան և ասացին. «Տէր, բաց արա դուռը»: Փեսան պատասխանեց և ասաց. «Ճշմարիտն եմ ասում, որ ես ձեզ չեմ ճանաչում» և դուռը բաց չարաւ:

Տասն կոյսերի շարականը

Իմաստուն կուսանքն

Պատրաստեալ իւղ լապտերաց,

Ելին ընդ առաջ երկնաւոր փեսային

Վառեալ լապտերօք:

Իմաստուն կոյսերը լապտերների համար իւղ վեր առան և վառած լապտերներով դուրս եկան փեսայի առաջ:

3.

Յ Ի Ս Ո Ի Ս Ի Մ Ա Տ Ն Ո Ի Թ Ի Ի Ն Ը

Ղազարոսի յարութիւնը անսնող հրէաներից մի քանիսը գնացին Յիսուսի թշնամի փարիսեցիների, քահանաների ու դպիրների մօտ և պատմեցին իրանց տեսածը: Սրանք իսկոյն ժողով արին և ասացին. «Ի՞նչ անենք, այն մարդը շատ հրաշքներ է անում, եթէ այդպէս թողնենք, ամենքն էլ նրան կհաւատան»: Նրանցից մինը՝ որի անունը Կայիափա էր, ասաց. «Իո՞ւր ոչինչ չգիտէք և հեռուն չէք էլ մտածում. աւելի լաւ է

Յիսուսին սպանենք՝ որովհետեւ եթէ այսպէս թողնենք, որ քարոզէ, ամենին էլ կմոլորեցրէ»: Այն օրից սկսած՝ քահանայապետը և փարիսեցիները որոշեցին նրան սպանել: Այս պատճառով հրաման ուղարկեցին ամեն կողմ, որ Յիսուսի տեղն իմանան և իմաց տան իրանց, որ բռնեն:

4.

Յ Ի Ս Ո Ի Ս Ի Հ Մ Մ Բ Ա Ր Ձ Ո Ի Մ Ը

Յարութիւնից ետոյ Յիսուս քառասուն օր էլի մնաց երկրիս վրայ—նա երբեմն զալիս էր իւր աշակերտների մօտ: Քառասներորդ օրը Յիսուս առաքեալների հետ Ջիթենեաց լեռը բարձրացաւ. այնտեղ պատուէր տուեց նրանց և ասաց. «Երուսաղէմից շհեռանաք, այլ սպասեցէք մինչև ես հայր Աստծուն կխնդրեմ, որ սուրբ Հոգին երկրներից ուղարկէ: Իո՞ւր զօրութիւն կստանաք. ետոյ կերթաք, կքարոզէք Երուսաղէմում, Հրէաստանում և միւս երկրներում ու ամեն տեղ կվկայէք իմ մասին: Ուրեմն զնացէք և բոլոր ազգերին քարոզեցէք Հօր, Որդու և սուրբ Հոգու մասին: Սովորեցրէք նրանց որ պահեն այն ամենը, ինչ որ ես ձեզ պատուիրեցի: Ով կհաւատայ և կմկրտուի, նա կազատուի,

երջանիկ կլինի, իսկ ով չի հաւատայ, կըպատժուի:

Երբ այս ասաց, բարձրացրեց երկու ձեռները և օրհնեց նրանց: Օրհնելու ժամանակ բաժանուեց նրանցից և երկինք բարձրացաւ: Իսկոյն մի ամպ եկաւ, ծածկեց նրան՝ այնպէս որ աշակերտներն այլ ևս չտեսան Յիսուսին: Նրանք երկրպագեցին. մեծ ուրախութիւնով ետ դարձան Երուսաղէմ և ամեն օր տաճարում օրհնում էին Աստծուն և սպասում էին սուրբ Հոգուն:

Համբարձման տօնը կատարում ենք  
Չատկից 40 օր ետոյ:

5.

Հ Ո Գ Ե Գ Ա Լ Ո Ի Ս Տ

Ձիթենեաց լեռնից առաքեալները դարձան Երուսաղէմ և միասին էին ապրում: Տասն օրից ետոյ, երբ նրանք ժողոված էին վերնատանը, յանկարծ երկինքից մի ձայն լսուեց՝ սաստիկ փշոզ քամունման և լցրեց այն տունը: Ետոյ առանձին-առանձին կրակի նման լեզուներ երևացին. այդ լեզուներից ամեն մինը իշաւ նրանցից իւրաքանչիւրի վրայ—նրանք սուրբ Հոգւով լցուեցան և սկսան զանազան լեզուներով խօսել:

Բացի Երուսաղէմացիներից՝ քաղաքում բնակուում էին շատ աստուածապաշտ հրէաներ, որոնք ուխտ էին եկել աշխարհի տմեն կողմերից: Երբ երկինքից իջնող ձայնը լսուեց, ժողովուրդը հաւաքուեց մէկ տեղ: Ամենքը զարմացած լսում էին, թէ ինչպէս առաքեալները ուրիշ ուրիշ լեզուներով էին խօսում: Ոչ ոք չէր հաւատում իւր տեսածին ու լսածին, սրա համար էլ մինը միւսին հարցնում էր. «Ձէ որ այս խօսողները բոլորն էլ անուսում գալիլիացիներ են, տեսէք ինչպէս մեր լեզուներով խօսում և պատմում են Աստծու մեծամեծ գործերը—այս ինչ պիտի լինի»: Իսկ ոմանք էլ ծաղրում էին և ասում: «Երևի հարբած են»:

Այն ժամանակ Պետրոսը տեղից վեր կացաւ և սկսեց այսպէս խօսել, «Ով հրէատանցիներ և Երուսաղէմում բնակուողներ, լաւ լսեցէք՝ ինչ որ ձեզ քարոզելու եմ: Սրանք հարբած չեն, ինչպէս կարծում էք, որովհետեւ դեռ առաւօտեան ժամի ինն է: Լսեցէք, ո՞վ խրաչելացիներ, ես ասեմ ձեզ, թէ սա ինչ բան է—Աստուած Յիսուս Նազովրեցուն աշխարհ ուղարկեց. նա եկաւ և ձեր մէջ հրաշքներ գործեց: Թէև դուք նրան խաչեցիք, բայց Աստուած երեք օրից ետոյ

յարութիւն տուեց նրան: Սրանք ինչ որ ա-  
նում են, ձեր խաչած Քրիստոսի զօրութիւ-  
նովն է»:

Երբ այս քարոզը լսեց ժողովուրդը,  
զղջաց իւր սրտում: Շատերը գալիս էին  
Պետրոսի, միւս առաքեալների մօտ և հարց-  
նում. «Ի՞նչ անենք»: Պետրոսն էլ ասում էր  
նրանց. «Ապաշխարեցէք և մկրտուեցէք Յի-  
սուս Քրիստոսի անունով: Ով կմկրտուի,  
սուրբ հոգու շնորհը կընգունի»: Այն օրը  
երեք հազար մարդ հաւատաց Պետրոսի խօս-  
քերին և մկրտուեց:

Հոգեգալստեան տօնը կատարում ենք  
Չատկից 50 օր ետ:

Հոգեգալստեան շարական

Այսօր երկնայինքն ուրախացան  
Ընդ երկրաւորացս նորոգումս,  
Քանզի նորոգողն էից հոգին էջ ի սուրբ  
վերնատունն,  
Որով նորոգեցան դասք առաքելոցն:

Այսօր հրեշտակներն ուրախացան, որ երկրիս  
վրայ բնակուող մարդիկը նորոգուեցան, որովհե-  
տե ամենին նորոգող սուրբ Հոգին իջաւ վերնա-  
տուն և առաքեալների դասը նորոգեց:

6.

ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ

Յիսուս Խաչի վրայից ասել էր Յովհան-  
նէս առաքեալին, որ իւր մօրը խնամք տանի:  
Այն օրից սկսած Մարիամը 16 տարի շա-  
րունակ Յովհաննիսի մօտ էր ապրում մինչև  
իւր մահը:

Երբ սուրբ կոյս Մարիամը մեռաւ, ա-  
ռաքեալները թաղեցին նրան Գեթսեմանի  
պարտէզում, որտեղ Յուզան Յիսուսին զի-  
նուորների ձեռն էր մատնել: Աստուածած-  
նի մահուան ժամանակ բոլոր առաքեալնե-  
րը՝ բացի Բարդուղիմէոսից, Երուսաղէմումն  
էին: Երբ Բարդուղիմէոսը Երուսաղէմ դար-  
ձաւ և իմացաւ Տիրամօր մահը, խիստ տխրեց  
և ցանկացաւ տեսնել նրա գերեզմանը: Ա-  
ռաքեալները նրան Գեթսեմանի պարտէզը  
տարան. բայց սրբան զարմացան, երբ գե-  
րեզմանը բաց արին և ոչինչ չգտան, որով-  
հետե Յիսուս Քրիստոս հրեշտակների ձե-  
ռով իւր մօր մարմինը երկինք էր տարել,  
այսինքն վերափոխել էր:

Բարդուղիմէոս առաքեալը շատ էր ցա-  
ւում, որ չկարողացաւ ոչ Տիրամօրը տեսնել  
և ոչ նրա մարմինը: Միւս առաքեալները

Բարդուղիմէոսին մխիթարելու համար՝ Աստուածածնի պատկերն ընծայեցին նրան։ Բարդուղիմէոս առաքեալը հայաստանում մի վանք շինեց և այս պատկերն այնտեղ դրաւ։

Մեր եկեղեցին տօնում է այդ օրը՝ երբ հրեշտակները սուրբ կոյս Մարիամի մարմինը երկինք տարան, այսինքն վերափոխեցին և դրա համար էլ այդ տօնի անունը կոչուում է վերափոխումն։

Այդ օրը եկեղեցի ենք գնում և Աստուածանից խնդրում, որ բարեխօս լինի իւր որդի Յիսուս Քրիստոսի մօտ՝ մեր աղօթքը լսելու, դրա համար էլ եկեղեցում երգում ենք—

«Փառաւորեալ եւ օրհնեալ միշտ սուրբ կոյս Աստուածածին Մարիամ, մայր Քրիստոսի, մատո զաղաչանս մեր որդւոյ քո եւ Աստուծոյ մերոյ։»

Ով դու փառաւորուած և օրհնուած միշտ սուրբ կոյս՝ Քրիստոսի մայր՝ Մարիամ Աստուածածին, մեր աղօթքը հասցրու քո Որդուն՝ մեր Աստծուն։

Սուրբ Աստուածածնի շարականը

Անկանիւք առաջի քո Աստուածածին եւ աղաչեմք զանարատ զկոյսդ։

Քո առաջն ենք ընկնում, (երկպագութիւն տալիս) ո՛վ Աստուածածին և աղաչում ենք քեզ՝ անարատ կուսիդ։

Բարեխօսեա՛ վասն անձանց մերոց եւ աղաչեա՛ զՄիածին որդին։

Բարեխօսիր մեզ համար և աղաչիր Միածին որդուն։

Փրկել զմեզ ի փորձութենէ եւ յամենայն վտանգից մերոց։

Որպէս զի ազատէ մեզ փորձութիւնից և ամեն տեսակ վտանգից։

Վերափոխման տօնին եկեղեցում խաղող ենք օրհնում։

62144.67



ԱՅԳԱՐ ԹԱԳԱԻՈՐԸ ԴԵՍՊՈՆՆԵՐ  
է ՈՒՂԱՐԿՈՒՄ ՅԻՍՈՒՍԻ ՄՕՏ

Հայոց Աբգար Թագաւորը, որ նստում էր Եդեսիա քաղաքում, եօթը տարի շարունակ հիւանդ էր—նա բորոտութիւն ունէր: Ամեն տեսակ դեղեր գործ էր դրել, բայց չէր առողջացել: Աբգարը լսեց, որ Հրէաստանում Յիսուս առանց դեղի բժշկում է ամեն տեսակ հիւանդութիւններ, այդ պատճառով նամակ գրեց և դեսպանների ձեռով ուղարկեց, որ գայ և իրան բժշկի: Ահա Աբգարի գրած նամակը. «Ես լսել եմ, որ դու առանց դեղի բժշկում ես հիւանդներին. կոյրերի աչքը բաց ես անում. կաղերին ոտն ես տալիս. բորոտներին սրբում ես. երկար ժամանակ հիւանդութիւն ունեցողներին առողջացնում ես և մինչև անգամ մեռելներին յարութիւն ես տալիս: Երբ ես այս բոլորը լսեցի, ինքս ինձ ասացի, որ դու կամ երկնքից իջած Աստուած ես, կամ Աստուծո՞րդի: Աղաչում եմ քեզ, արի և ինձ բժշկիր: Լսեցի նոյնպէս, որ հրէաները քեզ նեղացնում են: Ես մի փոքրիկ քաղաք ունեմ, եկ ինձ մօտ. երկուսիս էլ բաւական է. քեզ

այստեղ ոչ ոք չի նեղացնի»): Նամակն ուղարկելիս պատուիրեց դեսպաններին, որ եթէ Յիսուս չկարողանայ գալ, պատկերը քաշեն և իրան բերեն: Այս բանի համար մի նկարիչ ուղարկեց նրանց հետ:

Դեսպանները նամակը Յիսուսին տարան: Նա չկարողացաւ գալ և մեր Աբգար Թագաւորին այս պատասխանը գրեց. «Երանի նրան՝ ով ինձ չի տեսել, բայց հաւատում է: Գրում ես, որ քեզ մօտ գամ, չեմ կարող, որովհետև ես չեմ եկել հանգիստ ապրելու, այլ՝ շարժարուելու և խաչուելու: Երբ այս բոլորը վերջացնեմ, ետոյ հայր Աստուծո՞ւ մօտ պիտի գնամ: Իսկ իմ համբարձումից ետոյ աշակերտներիցս մինին կուղարկեմ, որ գայ քեզ բժշկի:

Ասում են, թէ երբ նկարիչը տեսաւ, որ Յիսուս չի գալիս, սկսեց նրա պատկերը նկարել, բայց չէր կարողանում: Յիսուս նկարչին իւր մօտ կանչեց. մի կտոր մաքուր կտաւ առաւ. երեսին ծածկեց և նրա վրայ նկարուեց իւր պատկերը: Ետոյ նկարչին տուեց, որ տանի Աբգարին: Այս պատկերը կոչւում է զաստասակ կամ անձեռագործ պատկեր:

ԹԱԴԷՈՍ ԵՒ ԲԱՐԹՈՒՂԻՄԷՈՍ

Յիսուս բացի 12 առաքեալներէց 72 աշակերտ էլ ունէր:

Համբարձումից ետ աշակերտներէց մինը՝ Թադէոս անուանով, հայաստան եկաւ: Երբ սա Աբգարի պալատը մտաւ, Թագաւորը երկրպագութիւն տուաւ նրան: Թագէտը քարոզեց Թագաւորին, բոլոր քաղաքացիներին և ասաց, որ Քրիստոսին հաւատան ու նրա ասածները կատարեն: Աբգարի գլխին ձեռք դրաւ և բժշկեց, նոյնպէս քաղաքի բոլոր հիւանդներին: Այս բանը որ տեսան քաղաքացիները, հաւատացին Քրիստոսին և մկրտուեցան:

Սուրբ Թադէոսը երկար ժամանակ չըմնաց աջտեղ, նա միւս առաքեալների նման պիտի գնար զանազան տեղեր և քարոզէր, այս պատճառով Թագաւորի Թագ շինող Ադգէին եպիսկոպոս ձեռնադրեց և հովիւ նշանակեց այս նոր քրիստոնեաների վրայ: Թագէտը Աբգարից հրաման առաւ և գնաց վերին Հայաստան՝ Թագաւորի քրոջորդի Սանատրուկի մօտ, քարոզեց նրան և նրա մարդ-

կանց ու ամենին էլ մկրտեց: Սանատրուկի աղջիկ Սանդուխտին ևս մկրտեց:

Սանատրուկը շատ կարճ ժամանակ քրիստոնեայ մնաց—հէնց Աբգարի մահից ետ՝ ուրացաւ քրիստոնէութիւնը և սկսեց շարձարել քրիստոնեաներին ու նահատակել նրաց: Իւր Սանդուխտ աղջկան շատ ստիպեց, որ ուրանայ քրիստոնէութիւնը, բայց նա չլսեց: Սանդուխտ կոյսը պատասխանեց, որ կուռքերին ոչ մի ժամանակ երկրպագութիւն չի տայ, կմեռնի, բայց կուռք չի պաշտի: Սրա համար հայրը իւր աղջկան նահատակել տուաւ: Բայց սրանով չբաւակաւնացաւ—որովհետեւ Սանդուխտ կոյսը սուրբ Թադէոսից էր ուսել քրիստոնէութիւնը, այս պատճառով ուսուցչին էլ նահատակել տուեց Արտազ գաւառում:

Այսպէս թէ ուսուցիչը և թէ աշակերտուհին լաւ համարեցին մեռնել՝ քան թէ կուռք պաշտել:

Սուրբ Թադէոսի մահից ետ՝ Յիսուսի աշակերտներէց մի ուրիշ ևս եկաւ Հայաստան, որ քրիստոնէութիւնը քարոզի: Սրա անունն էր Բարթոլոմէոս, Սա բերեց իւր հետ Մարիամ կուսի պատկերը. Տիգրիս գետի

ափին մի վանք շինեց՝ Աստուածածին անու-  
նով և այդ պատկերն այնտեղ դրաւ:

Սուրբ Թադէոս և Բարթողիմէոսն ա-  
ռաջին անգամ եկան մեր երկիրը քրիստո-  
նէութիւն քարոզելու և լ ու ս ա լ ո Ր Ե լ ու  
հայերին, սրա համար էլ նրանց անուանում  
ենք հայաստանի առաջին (նախկին) լ ու-  
ս ա լ ո Ր ի չ ն եր: Եւ որովհետեւ նրանք այդ-  
պիսի գեղեցիկ օրինակ են թողել մեզ հա-  
մար. մենք էլ ամեն տարի նրանց չենք մո-  
ռանում և տօն ենք կատարում եկեղեցում  
ու յիշում նրանց անուանները: Այդ օրը եր-  
գում ենք—

Շ ա ր ա կ ա ն առաքելոց

Հայրատունկ այգւոյն հրեղէն պարիսպը  
ևւ բարձր աշտարակը, ոսկեղէն բաժակը եւ  
ժիր մատռուակը Հայաստանեաց, հարք հո-  
գեւորք, Բարթողիմէոս եւ Թադէոս, բարե-  
խօս լերուք առ Տէր վասն անձանց մերոց:

Դուք հօր տնկած այգու հրեղէն պարիսպ-  
ներ, բարձր աշտարակներ, ոսկեղէն բաժակներ  
և ժիր մատռուակներ էք—սվ հայաստանցիներին  
հոգևոր հայրեր՝ Թադէոս և Բարթողիմէոս, բա-  
րեխօս եղէք Տիրոջ առաջ մեզ համար:

Թագաւոր երկնաւոր,  
Զեկեղեցի քո անշարժ պահեա՛  
Եւ գերկրպագոս անուանո՛ւքում  
Պահեա՛ ի խաղաղութեան:

Ո՛վ երկնաւոր Թագաւոր Յիսուս, քո եկեղե-  
ցին անշարժ պահիր, քո անուան երկրպագութիւն  
տուողներին խաղաղութեան մէջ պահիր:

9.

Ս. Գ Ր Ի Գ Ո Ր Լ Ո Ի Ս Ա Ի Ո Ր Ի Ձ

Պարսից Արտաշէր Թագաւորը թշնա-  
մացել էր Հայոց Խոսրով Թագաւորի հետ:  
Մի օր նա իւր պալատականների հետ այս-  
պէս խօսեց—ով հայոց Խոսրով Թագաւորին  
սպանի, ինչ պարգև կամենայ, ինձանից  
կտանայ: Իշխաններից մինը՝ Անակ անունով  
խոստացաւ Արտաշէրի ցանկութիւնը կատա-  
րել: Սա վերջրեց իւր ընտանիքը. հասաւ  
Հայաստանի սահմանը և այնպէս ցոյց տուաւ՝  
որպէս թէ Պարսից Թագաւորն իրան հալա-  
ծում է և մեր Թագաւորից պաշտպանու-  
թիւն խնդրեց: Խոսրովն Անակին սիրով ըն-  
դունեց: Նա այնպէս էր կարծում, որ փա-  
խստականը շատ տեղեկութիւններ կյայտ-  
նի Արտաշէրի զօրքի և նրա բոլոր զործերի  
մասին, այս պատճառով Անակին՝ հէնց իւր

պալատում տեղ տուաւ: Այնուհետեւ Արտաշի լրտես Անակը միայն նրա մասին էր մտածում, թէ ինչպէս սպանի մեր թագաւորին:

Մի օր Սոսրովը որսի գնաց իւր պալատականների հետ: Անակին էլ հետն առաւ: Որսի ժամանակ Անակը Սոսրովին փոքր ինչ հեռու տարաւ՝ որպէս թէ ծածուկ բան ունի ասելու: Այստեղ սրով խփեց թագաւորին, իսկ ինքը ձի նստեց և սկսեց փախչել: Մարդիկ ետևիցն ընկան: Անակը փախաւ, ձգեց իրան Երասխ գետը և խեղդուեց: Սոսրովը դեռ չէր մեռել, որ հրամայեց Անակի ընտանիքը կոտորել: Թագաւորի հրամանը կատարուեց—նրա ընտանիքը սրի անցրին: Միայն մանուկ Գրիգորին իւր Սօփիա դայեակը փախցրեց և տարաւ Կեսարիա քաղաքը:

Երբ Արտաշիւրը Պարսկաստանում իմացաւ, թէ Անակը սպանել է Սոսրովին, մեծ զօրք առաւ և եկաւ Հայասան, որ Սոսրովի տունը ջնջի: Հայերը չկարողացան պարսիկների դէմ կռուել: Արտաշիւրը մտաւ մեր երկիրը և հրամայեց Սոսրովի ընտանիքը կոտորել: Այսպէս էլ արին: Միայն Տրդատ

անունով մի տղայ հազիւ կարողացան փախցնել և հռովմ քաղաքը տանել:

Սօփիան Գրիգորին պահում էր Կեսարիայում: Փոքր ինչ որ մեծացաւ, նրան ուսումնարան ուղարկեց, ուր սովորում էր յունարէն և ասորերէն: Սօփիան ինքը քրիստոնեայ էր. փոքրիկ Գրիգորին սովորեցրեց, ինչ որ հարկաւոր էր քրիստոնէական կրօնի համար: Երբ Գրիգորը չափահաս դարձաւ, ամուսնացաւ Մարիամ անունով մի աղջկայ հետ և նրանից երկու որդի ունեցաւ՝ Վրթթաննէս և Արիստակէս: Մրանից ետ Մարիամի համաձայնութիւնով Գրիգորը բաժանուեց նրանից: Մարիամը կուսանոց մտաւ:

Գրիգորին պատմեցին, որ իւր հայր Անակը սպանել է Սոսրով թագաւորին, որի որդի Տրդատը Հռովմում է, սրա համար էլ վերկացաւ և գնաց այն քաղաքը, որ իւր մեղաւոր հօր փոխարէն Տրդատի մօտ ծառայութիւն անի և սրանով հօր մեղքերը փոքր ինչ թեթեւացնի:

Սոսրովի որդի Տրդատն էլ հռովմում էր մեծանում Իփոկղետիանոս կայսրի մօտ: Երբ հասակն առաւ, զինուորական ծառա-

յուրթեան մէջ մտաւ: Տրդատը մեծ ոյժ ունէր, լաւ ձի նստել և գէնք գործածել գիտէր: Մի անգամ ձեռով բռնեց եղան եղջիւրը և քաշեց, հանեց: Մի անգամ էլ ընկերի հետ կառք էին քշում. ընկերը դիտմամբ Տրդատին կառքից վար ձգեց, բայց սա ետևից վազեց և կառքից այնպիս բռնեց, որ ձիերն էլ չկարողացան առաջ գնալ: Մի անգամ էլ Հռովմ քաղաքի Դիոկղետիանոս կայսրը պատերազմ ունէր: Թշնամին մարդ ուղարկեց և այսպէս էր ասում— փոխանակ զօրքով մէկ մէկու հետ կռուելու և ի դուր տեղը մարդիկ սպանելու, արի ես ու դու մենամարտենք: Եթէ ես յաղթեմ, դուք ամենքդ ինձ ծառայ եղէք, իսկ եթէ դու յաղթես, մենք ամենքս քեզ հարկ տանք:

Դիոկղետիանոսն այս բանից խիստ վախեցաւ և չգիտէր, թէ ինչ անի: Կայսրի զօրավարներից մէկն ասեց. «Տէր Թագաւոր, ամենևին մի մտածիր այդ մասին, հայոց Թագաւորի որդի Տրդատը, որ իմ գնդում ծառայում է, կարող է քեզ ազատել» և Տրդատի մասին շատ բաներ պատմեց: Դիոկղետիանոսն իսկոյն Տրդատին իւր մօտ կանչել տուեց. Թագաւորական զգեստ հագրեց, Թագաւորի նշաններով զարդարեց և ամեն տեղ յայտնեց, որ նա կայսրն ինքն է:

Միւս օրը իւր թշնամու մօտ մարդ ուղարկեց և յայտնեց, որ վաղը իրար հետ մենամարտելու են: Երկրորդ օրը Տրդատը ձի նստեց. քշեց թշնամու կողմը, յարձակուեց նրա վրայ. բռնեց և Դիոկղետիանոսի մօտ բերեց: Կայսրը չափից դուրս ուրախացաւ, որ իրան սզատողը Հայոց Թագաւոր Խոսրովի որդին է, ուստի Թագաւորական զգեստ հագցրեց. գլխին Թագ դրեց. հռովմէական զօրք տուեց, որ գնայ Հայաստան և իւր հօր փոխարէն Թագաւոր է:

Տրդատը հասաւ Կեսարիա քաղաքը. Գրիգորը նրա հետն էր: Հայնախարարները, երբ իմացան, որ իրանց Թագաւորի որդին զօրքով գալիս է, եկան, միացան նրա հետ, որպէսզի պարսիկներին դուրս անեն մեր երկրից:

Տրդատը մտաւ Հայաստան և հասաւ Երիզա քաղաքը: Այստեղ էր կռապաշտ հայերի աստուածուհի Անահիտի արձանը, որին մեր պապերը պաշտում էին: Թագաւորը Անահիտին զոհ բերեց և խնդրեց, որ յաջողութիւն տայ իր գործին: Թէ նա և թէ բոլոր զինուորները գնում էին ու երկրպագութիւն տալիս կռուքին: Հերթը Գրիգորին հասաւ: Տրդատը հրամայեց, որ նա էլ

Անահտին աղօթք անի: Բայց Գրիգորը քրիստոնեայ էր, չուզեց կուռքին երկրպագութիւն տայ: Տրդատը բարկացաւ Գրիգորի վրայ և հրամայեց, որ անպատճառ Անահտի առաջ աղօթի: Գրիգորը չուզեց: Այն ժամանակ թագաւորին պատմեցին, թէ նա իւր հօրը սպանող Անակի որդին է: Տրդատը աւելի ևս բարկացաւ, հրամայեց Գրիգորին խիստ պատիժներ տալ—պատուիրեց, որ տանեն Արտաշատ քաղաքի Խորվիրապը ձգեն, որպէսզի այնտեղ սովից մեռնի: Այս վիրապը լի էր բազմաթիւ օձերով և կարիճներով: Այստեղ ձգում էին յանցաւորներին, ինչպէս որ մեզ մօտ բանտ են ձգում: Գրիգորը 15 տարի մնաց այնտեղ: Ասում են, թէ մի քրիստոսեայ կին Աստծու հրամանով ամեն օր մի-մի հաց էր ձրգում հորը, որ Գրիգորը ուտի և չմեռնի:

Տրդատը երբ մտաւ Հայաստան, դուրս արեց պարսիկներին և ինքն սկսեց կռուվարել: Թագաւորը կռապաշտ էր, դրա համար էլ հրաման հանեց, որ իւր տէրութեան մէջ՝ ուր էլ քրիստոնեայ գտնեն, ստիպեն կուռքերին երկրպագութիւն տալու, իսկ եթէ հակառակողներ լինեն, իսկոյն սպանեն նրանց:

ՀՌԻՓՄԻՄԵԱՆ ԵՒ ԳԱՅԻԱՆԵԱՆ ԿՈՅՍԵՐԸ  
ՓԱԽԶՈՒՄ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Դիոկղետիանոս կայսրը կամենում էր իւր համար կին առնել: Ամեն կողմ պատկերահաններ ուղարկեց, որ թագուհի լինելու արժանի գեղեցիկ աղջիկներ գտնեն. նրանց պատկերները նկարեն և իրեն բերեն: Այս պատկերահաններից մի քանիսն էլ չոռով քաղաքի մօտ գտնուող կուսանոցը գնացին: Այստեղ մի գեղեցիկ կոյս կար՝ անունը Հռիփսիմէ. սրա պատկերն ուժով քաշեցին և կայսրին տարան: Կայսրը հաւանեց Հռիփսիմէին և ուզում էր նրան թագուհի դարձնել:

Երբ այս բանն իմացաւ կուսանոցի մայրապետ Գայիանէն, բոլոր կոյսերին հաւաքեց և Հռիփսիմէի հետ միասին փախան, եկան Հայաստան ու Վաղարշապատ քաղաքի մի այգու հնձանում բնակուեցին: Կոյսերից մինն ապակիէ յուլունքներ էր շինում. ծախում էին և սրանով ապրում:

Դիոկղետիանոսը խիստ բարկացաւ փախած կոյսերի վրայ, ամեն կողմ մարդ ուղարկեց, որ նրանց գտնեն: Երբ իմացաւ, որ Հռիփսիմէն Հայաստան է փախել, մեր

Տրդատ Թագաւորին էլ նամակ գրեց, որի մէջ ասում էր. «Եթէ կոյսերին գտնես, Հռիփսիմէին ինձ ուղարկիր, միւսներին սպանիր, իսկ եթէ ցանկանաս, կարող ես դու էլ ամուսնանալ նրա հետ:

Տրդատն այս թուղթը ստանալուն պէս իւր երկրի մէջ ամեն կողմ մարդ ուղարկեց, որ փնտռեն նրանց: Մի քանի օրից ետ կոյսերին գտան: Թագաւորը հրամայեց հրնձանը զինուորներով պատել: Պալատից թանկագին շորեր ուղարկեց, որ հագցնեն Հռիփսիմէին և իւր մօտ բերեն: Հռիփսիմէն չէր կամենում պալատ գնալ, բայց թագաւորը հրամայեց իւր ծառաներին, որ նրան ուժով բերեն: Թագաւորի հրամանը կատարուեց — Հռիփսիմէին քաշ տալով մինչև պալատ տարան: Թագաւորը տեսնելով նրա գեղեցկութիւնը, ուզեց ինքը նրա հետ ամուսնանալ, բայց Հռիփսիմէն ոչ մի ձևով չհամաձանեց թագուհի դառնալ: Փախաւ և գնաց իւր ընկերուհիներէի մօտ. պատմեց նրանց իւր գլխովն անցածը. փոքր ինչ հեռացաւ նրբանցից և սկսեց Աստծուն աղօթել և շնորհակալութիւն անել, որ իրան այդպիսի վտանգից ազատեց: Այդ միջոցին թագաւորի դահլճները ջահերը ձեռներին եկան. գտան

Հռիփսիմէին. լեզուն կտրեցին, աչքերը հանեցին և մարմինը կտոր-կտոր արին: Հռիփսիմէից ետ սպանեցին նրա 35 ընկերուհիներին մայրապետի հետ միասին:

11.

Ս. ԳՐԻԳՈՐԻՆ ԴՈՒՐՄ ԵՆ ԲԵՐՈՒՄ ՎԻՐԱՊՅ

Թագաւորն այս բանի վրայ շատ էր մտածում. նրա խիղճը տանջում էր իրան. հանգիստ չունէր — քունը չէր տանում: Նա խելագարի պէս՝ վայրենի խողի նման թափառում էր: Թագաւորի քոյր Խոսրովադուխտը մի բարի աղջիկ էր: Հրեշտակը սրան երազում երևաց և ասաց. «Եթէ կամենում էր, որ թագաւորն առողջանայ, Գրիգորին պիտի վիրապից հանէք. նա միայն կարող է բժշկել»: Խոսրովադուխտն այս երազը նախարարներին պատմեց, նրանք չհաւատացին — ամենևին չէին կարծում, թէ Գրիգորը 15 տարի վիրապում կենդանի մնացած լինի: Երեք անգամ նոյն երազը կրկնուեց, ետոյ հաւատացին: Աջուհետև Խորվիրապ գնացին, չուանը կախ արին և ձայն տուին. «Գրիգոր, եթէ կենդանի ես, դուրս արի:

Աստուած հրամայեց, որ քեզ այստեղից հանենք»։ Գրիգորը կենդանի էր։ Նրան դուրս հանեցին և վաղարշապատ բերին։ Տրդատը և նախարարները Գրիգորի ոտներն էին ընկնում և ներողութիւն խնդրում։ Գրիգորն աղօթեց Աստծուն և օրհնելով հիւանդ թագաւորին ու նախարարներին, բժշկեց նրանց։ Սրանից ետոյ փողոցներում թափուած կոյսերի մարմինները թաղել տուեց։

Երկրորդ օրը նախարարները թագաւորի հետ Գրիգորի մօտ եկան և խնդրեցին, որ ձմարիտ հաւատը սովրեցնի իրանց։ Գրիգորը շատ ուրախացաւ այս բարի բանի վրայ և 66 օր շարունակ քարոզում և ուսուցանում էր նրանց քրիստոնէական հաւատը։

Տրդատը, իշխանները և ժողովուրդը հաւատացել էին Քրիստոսին և ընդունել քրիստոնէութիւնը, բայց ոչ քահանայ ունէին և ոչ եպիսկոպոս, որ քարոզէին, սովորցնէին և մկրտէին նրանց, այս պատճառով Տրդատ թագաւորը Գրիգորին կեսարիա քաղաքն ուղարկեց, որ Ղևոնդ արքեպիսկոպոսից կաթողիկոս ձեռնադրուի և նոր քրիստոնէայ դարձած հայ ժողովրդին սովորցնի քրիստոնէ-

ութիւնը։ Գրիգորը կեսարիա գնաց։ Ղևոնդը կաթողիկոս ձեռնադրեց նրան։ Վերագանալիս Ս. Յովհաննէս Մկրտչի և Աթանազինեայ եպիսկոպոսների մասունքների մասը հետն առաւ, դարձաւ Հայաստան՝ Մուշ քաղաքի կողմերը։ Նա հետը բերաւ և շատ քահանաներ։

Այդպեղ կռատներ՝ մեհեաններ կային։ Բոլորն էլ քանդեց. կուռքերի սեղանները՝ բազինները կործանեց. նրանց տեղ եկեղեցի շինեց և Յովհաննէս Մկրտչի մասունքն այն տեղ դրեց։ Այս եկեղեցին սուրբ կարապետ կոչուեց, ուր մինչև այսօր էլ ոնութիւ ուխտաւորներ են գնում։

Տրդատը, երբ իմացաւ, որ Ս. Գրիգորը վաղարշապատ քաղաքին մօտենում է, դուրս եկաւ նրա առաջ իշխանների և ժողովրդի հետ միասին։ Ս. Գրիգորը 30 օր ծոմ պահել տուաւ նրանց, ետոյ թագաւորին, նրա ընտանիքին, իշխաններին և անթիւ ժողովրդեան մկրտեց Եփրատ գետի մէջ։ Սուրբ Գրիգորը Էօթն օր ձնաց այնտեղ և չորս միլիօնից աւելի մարդ մկրտեց։

Սրանից ետ Սուրբ Գրիգորը Տրդատին խորհուրդ տուաւ, որ Հայաստանում ամեն տեղ ուսումնարաններ բանայ, քահանաներ պատրաստի, որ մնացած հեթանոս հայ ժողովրդին քարոզեն և մկրտեն: Այս ուսումնարաններից մի քանիսում յունարէն և մի քանիսումն էլ ասորերէն էին սովորեցնում, որովհետև դեռ ևս հայերէն գրեր չկային: Բացի սրանից սուրբ Գրիգորը 12 եպիսկոպոս ձեռնադրեց հայերի համար:

Սուրբ Գրիգորը եղաւ մեր առաջին եպիսկոպոսապետը՝ հայրապետը՝ կաթողիկոսը: Նա Հայաստանի ամեն կողմերում ուսումնարաններ բաց անել տուաւ. այստեղից աւարտածները քահանաներ էին դառնում և հայերին հետզհետէ քրիստոնեայ դարձնում—մի խօսքով Սուրբ Գրիգորը մեր երկիրը լուսաւորեց և դրա համար էլ նրան ասում ենք Սուրբ Գրիգոր (կամ երկրորդ) Լուսաւորիչ:

Ս. Գրիգոր Լուսաւորչի Շարականը

Այսօր գիմանալի լուսոյն ծագողն  
 Ի խաւարի նստելոցս  
 զԳրիգորիոս սուրբ հայրապետն  
 Եկայք վերապատուեսցուք:

Խաւարի մէջ նստողներիս մտաւոր լոյս տուող Ս. Գրիգոր հայրապետին եկէք այսօր վերապատուենք:

Այսօր զանապական Հոգոյն պարգեւս  
 Բաշխող որդոց Թորգոմայ.  
 Յորդիս լուսոյ նովաւ ծնեալք.  
 Եկայք վերապատուեսցուք:

Եկէք այսօր պատուենք անապական հոգու պարգեները Թորգոմի որդիների բաշխողին, որով ծնուել ենք իբրև լուսոյ որդիներ:

Այսօր զաստուածային քանին պատմող  
 Ի Հայաստան աշխարհի  
 Աշակերտեալ նմա մանկունք.  
 Եկայք վերապատուեսցուք:


Հայաստան աշխարհում Աստուծու խօսքը քարոզողին, ով նրան աշակերտող մանուկներ, եկէք այսօր վերապատուենք:

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՆՈՐԶԻ ԵՐԱԶԸ

Սուրբ Գրիգոր Լուսաւորիչը մի անգամ երազում տեսաւ, սր երկինքը բացուեց և սկսաւ այնտեղից լոյս իջնել դէպի երկիրը: Լուսի հետ միասին իջաւ Աստծու միածին որդին՝ ձեռին բռնած ոսկէ ուռն (մուրճ): Այս մարդն իջաւ Վաղարշապատ քաղաքի մէջ տեղը և գեանին ուռով խփեց: Իսկոյն գեանի տակից՝ այսինքն անդնդից սարսափելի ձայներ լսուեցին: Սրանից ետ թագաւորի պալատի վրայ երևաց ոսկէ խարիսխ (1), որի մեծութիւնը մի մեծ բլրի չափ էր: Այս խարսխի վրայ կրակէ սիւն կար (2), սիւնի վրայ ամպեղէն զմբէթ (3) եկեղեցու նման, իսկ զմբէթի վրայ էլ լուսաւոր խաչ (4):

Սուրբ Գրիգոր Լուսաւորիչը զարմացած նայում էր և չգիտէր, թէ ինչ նշանակութիւն ունեն այս ամենը: Աստծու հրեշտակն իջաւ երկնքից և մեկնեց սուրբ Գրիգորին նրա երազը: Հրեշտակն ասաց—նա, որ ձեռին ոսկէ ուռն ունէր բռնած: Աստծու որդին՝ Յիսուս Գրիստոսն (Միածին) էր. հրեղէն սիւնը՝ այժմեան սուրբ էջմիածնի

1. 2. 3. 4. տես պատկերի մէջ:



տաճարը, իսկ լուսաւոր խաչը՝ հայոց կաթողիկոսութիւնն է: հրեշտակը յայտնեց, որ այս ուռով խփած տեղը եկեղեցի պիտի շինել: Այնտեղ պիտի աղօթեն բոլոր քրիստոնեաները. հայոց կաթողիկոսի աթոռն այնտեղ պիտի հաստատուի, այսինքն հայոց կաթողիկոսներն այնտեղ պիտի նստեն:

13.

**Էջմիւստնի ՏԱՃԱՐԻ ՇԻՆՈՒԹԻԻՆԸ**

Միւս օրը սուրբ Գրիգորը պատմեց այս երազը Տրդատ թագաւորին, նախարարներին, ժողովրդին և պատուիրեց, որ հրեշտակի ցոյց տուած տեղի չորս կողմը քարէ պատ շինեն: Սուրբ Գրիգորն այդ երազը տեսել էր թագաւորին և նրա նախարարներին մկրտելուց առաջ: Երբ թագաւորական տունը և ժողովրդին մկրտեց, Վաղարշապատ դարձաւ և Միածնի իջած տեղում 302 թուին մի եկեղեցի շինեցին այն ձևով ինչպէս որ երազ էր տեսել: Այս եկեղեցին առաջ Շողակաթ էր կոչւում, որովհետև լոյսը, այսինքն շողը այստեղ կաթեց: Այժմ այլ ևս Շողակաթ չեն ասում, այլ էջ-

միածին, որ նշանակում է թէ այնտեղ իջաւ Միածինը՝ Յիսուս Քրիստոսը: Եկեղեցու շինութեան վրայ աշխատում էին ոչ թէ միայն ժողովուրդը՝ այլև թագաւորըն ինքը, Աշխէն թագուին, թագաւորի որդին, քոյրը, նախարարներն ու իշխանները: Բացի էջմիածնից սուրբ Լուսաւորիչը ուրիշ եկեղեցիներ էլ շինեց՝ մինը Գայիաունէ կուսի անունով, միւսը Հռիփսիմէի և սըրանցում թաղեց նրանց մարմինները, իսկ երբորդ եկեղեցին հնձանի տեղում շինեց, որն այժմ կոչւում է Շողակաթ:

Սուրբ էջմիածինը 302 թուից սկսած բոլոր հայերի մայր եկեղեցին է: Այն տեղ է նստում հայոց կաթողիկոսը:

Ս. էջմիածնի հիմնարկութիւնը մեր եկեղեցին տօնում է Հոգեգալստից երկու շաբաթ ետ:

Շարական Ս. Էջմիածնի

Էջ Միածինն ի Հօրէ  
Եւ լոյս փառաց ընդ նմա,  
Չայնք հնչեցին  
Սանդարամ ետք անդնդոց:

Միածինը լուսով պատած իջաւ երկնքից:  
Այն ժամանակ սանդարամետի, այսինքն դժողբի  
անդնդից ձայներ լսուեցան:

Տեսեալ զլոյս  
Մեծ հայրապետին Գրիգորի,  
Պատմ էր ցնծովծեամբ  
Հաւատացեալ արքային:

Մեծ հայրապետ Գրիգորը, երբ լոյսը տեսաւ,  
ուրախ ուրախ պատմում էր նոր քրիստոնեայ  
գարձած թագաւորին:

Եկայք շինեսցուք  
Սուրբ զխորանն լուսոյ,  
Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս  
Ի Հայաստան աշխարհի:

Եկէք այստեղ լուսոյ խորանը, այսինքն ե-  
կեղեցի շինենք, որովհետեւ Հայաստան աշխարհի  
մէջ այստեղ լոյս ծագեց մեզ համար:

Բարեխօսութեամբ  
Վերին քո գօրաց,  
Միշտ անշարժ պահեա  
Զսլոռո Հայկազնեաց:

Քո վերին զօրքերի (հրեշտակների) բարե-  
խօսութիւնով միշտ անշարժ պահիր հայկազուն-  
ների աթոռը, այսինքն հայոց եկեղեցին՝ էջմիա-  
ծինը:

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ե Ա Յ Ա . Ե Կ Ե Ղ Ե Յ Ի Ո Յ  
Հ Ա Ի Ա Տ Ո Յ Հ Ա Ն Գ Ա Ն Ա Կ Ը

Հաւատամք ի մի Հաւատում ենք որ կայ  
Աստուած ի հայրն ա- մի Աստուած, որ նա ա-  
մենակալ, յարարիչն մենակալ Հայր է. երկնքի  
երկնի և երկրի՝ երևե- ու երկրի՝ երևելիների և  
լեաց և աներևութից: աներևոյթների ստեղծո-  
ղըն է:

Եւ ի մի տէր Յի- Հաւատում ենք որ  
սուս Քրիստոս. յՈր- Յիսուս Քրիստոսը մեր  
դին Աստուծոյ՝ ծըն- միակ տէրն է, որ նա  
եալն յԱստուծոյ Հօրէ՝ Հայր Աստուծ միածին  
միածին, այսինքն յէ- որդին է, այսինքն նրա  
ուրթենէ Հօր: էութիւնիցն է:

Աստուած յԱստու- Հաւատում ենք որ նա  
ծոյ, լոյս՝ ի լուսոյ. Աստուած է՝ Աստուծոց.  
Աստուած ճշմարիտ լոյս է՝ լուսից. ճշմարիտ  
յԱստուծոյ ճշմարտէ՝ Աստուած է, ճշմարիտ  
ծնունդ և ոչ արարած: Աստուծոց՝ ծնած է և ոչ թէ  
ստեղծուած: Հաւատում

Նոյն ինքն ի բնութե-  
նէ հօր, որով ամե-  
նայն ինչ եղև յերկինս  
և ի վերայ երկրի՝ երե-  
ւելիք և աներևոյթք:

Որ յաղագս մեր  
մարդկան և վասն մե-  
րոյ փրկութեան իջեալ  
ի յերկնից՝ մարմնա-  
ցաւ, մարդացաւ. ծը-  
նաւ կատարելապէս  
ի Մարիամայ Սրբոյ  
կուսէն Նոգուովն Սըր-  
բով: Որով էառ մար-  
մին, հոգի և միտ և  
զամենայն որ ինչ է  
ի մարդ՝ ճշմարտապէս  
և ոչ կարծեօք:

Չարչարեալ, խա-  
չեալ, թաղեալ, յեր-  
րորդ աւուռ արու-  
ցեալ, ելեալ ի յեր-  
կինս նստիին մարմնով  
նստաւ ընդ աջմէ հօր:

Փալոց է նստիին մարմ-  
նով և փառօք հօր  
ի դատել զկենդանիս  
և զմեռեալս, որոյ թա-  
գաւորութեան ոչ գոյ  
վախճան:

ենք, որ Նա նոյն Հայր  
Աստծու բնութիւնիցն է,  
որով ամեն բան եղաւ  
երկնքում և երկրիս վը-  
րայ՝ թէ երևելիները և  
թէ աներևոյթները:

Հաւատում ենք, որ  
մարդկանցս փրկութեան  
համար իջաւ երկնքից,  
մարմին առաւ. մարդ  
դարձաւ և ծնաւ կատա-  
րեալ կերպով՝ սուրբ  
Հոգուով Սուրբ Կոյս Մա-  
րիամից: Հաւատում ենք,  
որ սուրբ Հոգուով առաւ  
մարմին, հոգի, միտք և  
այն ամենն՝ ինչ որ կայ  
մարդու մէջ՝ ճշմարիտ  
կերպով և ոչ թէ կար-  
ծեօք:

Հաւատում ենք, որ Նա  
չարչարուեց, խաչուեց,  
թաղուեց, երրորդ օրը  
յարութիւն առաւ. նոյն  
մարմնով երկինք համ-  
բարձաւ ու նստաւ Հօր  
աջ կողմը:

Հաւատում ենք, որ Նա  
պէտք է դայ նոյն մար-  
մնով և Հօր փառքով՝  
կենդանիներին ու մե-  
ռածներին դատելու և  
որի թագաւորութիւնը  
անվերջ կլինի:

Հաւատամք և ի սուրբ  
Հոգին՝ յանեղն և ի կա-  
տարեալն, որ խօսե-  
ցաւ յօրէնս և ի մար-  
գարէս և յաւետա-  
րանս: Որ էջն ի Յոր-  
դանան, քարոզեաց  
զառաքեալն և բնա-  
կեցաւ ի սուրբսն:

Հաւատամք և ի մի-  
միայն ընդհանրական  
և առաքելական սուրբ  
եկեղեցի ի մի մկրտու-  
թեան, ապաշխարութեան,  
տուժիւն, յապաշխա-  
րութիւն, ի բաւու-  
թիւն և ի թողութիւն  
մեղաց, ի յարութիւն  
մեռելոց, ի դատաս-  
տանն յաւիտենից՝  
հոգւոց և մարմնոց,  
յարքայութիւն երկ-  
նից և ի կեանան ա-  
ւիտենականս:

Իսկ որք ասեն՝ էր  
երբեմն յորժամ ոչ էր  
Որդի, կամ էր երբեմն

Հաւատում ենք նաև  
սուրբ Հոգուն, որ նա ոչ  
որքից չէ ստեղծուել: Կա-  
տարեալ Աստուած է, որ  
խօսեց օրէնքի, մարգա-  
րէների և աւետարաննե-  
րի մէջ. որ Յորդանան  
գետն իջաւ. քարոզեց  
Աստծուց ուղարկուած  
Քրիստոսի մասին և բնա-  
կուեց սրբերի մէջ:

Հաւատում ենք նաև  
միայն մի ընդհանրական  
և առաքելական սուրբ ե-  
կեղեցու.— մի մկրտու-  
թեան, ապաշխարութեան,  
մեղաց քաւութեան և թո-  
ղութեան, մեռելների յա-  
րութեան, հոգիների և  
մարմինների վերջին դա-  
տաստան լինելուն, եր-  
կնքի արքայութեանը և  
յաւիտենական կեանքին:

Իսկ նրանք, որոնք  
ասում են՝ թէ կար ժա-  
մանակ, երբ ոչ Աստծու

հորժամ ոչ էր սուրբ  
 չոգի կամ թէ յոչէից  
 եղեն. կամ յայլմէ էու-  
 թենէ ասեն լինել զոր-  
 զին Աստուծոյ և կամ  
 զսուրբ Հոգին և թէ  
 փոփոխելիք են կամ  
 ալլալելիք, զայնպի-  
 սիսն նգովէ կաթողի-  
 կէ և առաքելական  
 սուրբ եկեղեցի:—

որդին կար և ոչ սուրբ  
 չոգին. կամ ասում են,  
 թէ Աստուծու որդին կամ  
 ս. Հոգին ոչնչից զոյա-  
 ցած են և հօր Աստուծու  
 էութիւնից չեն, այլ ու-  
 ըիշ էութիւնից են եղած,  
 կամ թէ կարող են փո-  
 փոխուել կամ ալլալուել:  
 Այսպիսիներին նգովում  
 է կաթողիկէ և առաքե-  
 լական սուրբ եկեղեցին:

Իսկ մեք փառաւո-  
 րեցուք որ յառաջ  
 քան զյաւիտեանս, եր-  
 կիրպագանելով սրբոյ  
 Երրորդութեան և միոյ  
 աստուածութեան հօր  
 և Որդւոյ և Հոգւոյն  
 սրբոյ, այժմ և միշտ  
 յաւիտեանս յաւիտե-  
 նից՝ ամէն:

Իսկ մենք փառաւո-  
 րում ենք յաւիտենից ա-  
 ռաջ եղողին՝ երկրպագե-  
 լով սուրբ Երրորդու-  
 թեան և մի Աստուածու-  
 թեան — Հօր, Որդուն,  
 սուրբ Հոգուն՝ այժմ և  
 միշտ և յաւիտեանս յա-  
 վիտենից. ամէն:

### Պ Ա Տ Ա Ր Ա Գ Ի Ե Ր Գ Ե Ր

Մարմին տէրունական ևւ արին փրկի-  
 չական կայ առաջի. երկնային զօրութիւնն  
 յաներեւոյթս երգեն ևւ ասեն անհանգիստ  
 քարքատով—Սուրբ, Սուրբ, Սուրբ տէր զօ-  
 րութեանց:

Տէրունական մարմինը, փրկչական արինը  
 առաջներս դրած է, երկնային զօրքերն (հրեշոտ-  
 ները) աներեւոյթ կերպով երգում են և ասում շա-  
 րունակ—Սուրբ, Սուրբ, Սուրբ, Տէր զօրութեանց:

Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ.  
 Որ էնն Աստուած աստ քազմեցաւ,  
 Խաղաղութեան ճայն հնչեցաւ,  
 Սուրբ ողջունի հրաման տուաւ:  
 Եկեղեցին մի անձն եղև.  
 Համբոյրս յօր լրման տուաւ:  
 Թշնամութիւնն հեռացաւ.  
 Մէր յընդհանուրս սփռեցաւ:  
 Արդ պաշտօնեայք քարձեալ զճայն՝  
 Տուք օրհնութիւն ի մի ըերան,  
 Միասնական աստուածութեան,  
 Որում սրովքէք նն սրբարան:

Քրիստոս մեր մէջ յայտնուեց: Որ էն Աստուածն այստեղ (սեղանի վրայ) բազմեց: Խաղաղութեան ձայն լսուեց. սուրբ ողջունի հրաման տրուեց: Եկեղեցիս (բոլոր քրիստոնեաների ժողովը) մի սիրտ—մի հոգի դարձաւ և այս ողջունի համբոյրը միութեան կապ եղաւ: Թշնամութիւնը հեռացաւ: Քրիստոսի սէրն ամենիս մէջ տարածուեց: Ուրեմն, սով պաշտօնեաներ, ձայներդ բարձրացնելով՝ միաբերան օրհնութիւն տուէք միասնական Աստուածութեանը, որին սրովբէները փառաբանում են:

Գոհանամք զքէն Տէր, որ կերակրեցեր զմեզ յանմահական սեղանոյ քո՝ քաշխելով զմարմին եւ զարիւն ի փրկութիւն աշխարհի եւ կեանք անձանց մերոց:

Շնորհակալ ենք քեզնից, սով Տէր, որ մեզ կերակրեցիր քո անմահական սեղանից, բաշխելով քո մարմինն ու արիւնը՝ աշխարհի փրկութեան և մեր անձին կեանք լինելու համար:

Սուրբ, Սուրբ, Սուրբ Տէր զօրութեանց, լի են երկինք եւ երկիր փառօք քո: Օրհնութիւն ի բարձունս օրհնեալ որ եկիր եւ զա-

լոցդ եւ անուամբ Տեառն: Ովսաննա ի բարձունս:

Սուրբ, սուրբ, սուրբ Տէր զօրութեանց, երկինքն ու երկիրը լի են քո փառքերով: Օրհնութիւն լինի բարձրումը. օրհնեալ ես, որ եկար և պիտի գաս Տիրոջ անունով: Ովսաննա բարձրումը:

## Յ Ա Ն Կ

|  |    |
|--|----|
| 1. Ղազարոսի յարութիւնը . . . . .                                 | 5  |
| 2. Տասն կոյսեր . . . . .   | 8  |
| 3. Յիսուսի մատնութիւնը. . . . .                                  | 10 |
| 4. Յիսուսի համբարձումը. . . . .                                  | 11 |
| 5. Հոգեգալուստ . . . . .   | 12 |
| 6. Վերափոխումն . . . . .   | 15 |
| 7. Աբգար թագաւորը դեսպաններ է ուղարկում Յիսուսի մօտ . . . . .    | 18 |
| 8. Ս. Թադէոս և Բարթոլոմէոս . . . . .                             | 20 |
| 9. Ս. Գրիգոր (կամ երկրորդ) Լուսաւորիչ 23                         |    |
| 10. Հռիփսիմեան և Գայիանեան կոյսերը փախչում են Հայաստան . . . . . | 29 |
| 11. Ս. Գրիգորին դուրս են բերում Վիրապից . . . . .                | 31 |
| 12. Ս. Գրիգոր Լուսաւորչի երազը . . . . .                         | 36 |
| 12. Էջմիածնի տաճարի շինութիւնը . . . . .                         | 38 |
| 14 Հաւատոյ հանգանակ . . . . .                                    | 41 |
| 15. Պատարագի երգեր . . . . .                                     | 45 |

Հայաստանի Ազգային գրադարան



NL0429940

